

« ի՞նչ մարդոյ է ինչ յնական, ապա «րչտփ
« մանկեանց անկրթից: Ուստի կրկնակի
« կողողազիւն աղաչեմ, զի բարց ուրուք
« փաստի՛ բնկարարութք գրգռեաքեա ման-
« ճայս՝ ըստ որում և յինկն եղկիւոյս բն-
« ժայի պատուով և հնգարեանմբ, առ րա-
« րեպաշտութեանն ձերոսմ, որ և դուք յի-
« շնայիք զսկզ մերք միով հայր մերիս աւ-
« տուածընկալ յաղօրս ձեր, և դուք յիշեալ
« և ողջ յերուք ի շնորճ Բարձրերոյն Ամեն,
« որ եմ ապիկար աստուծոյ յիստսի և հա-
« մօրեկ րարեպաշտից Աստուածասիրոց:

« ՄԱՆՈՒԿ ՊԱՍՔԵԱԼ ԵՒ ԱՆՊԻ-
« ՏԱՆ, ԵՒ ՈՐԴԻ ԲԺԵՆԿ ԻՍԱ-
« ՀԱԿԵԱՆ, ԿՈԶՄԱՄԲ ԵՒԵԹ
« ՊՈՆՏԱՅՈՒՑ »:

*

Բայց պարունակութեանը մէջ բնա-
տարրերութիւն չի կայ, և կը պակսի
միայն իւր վերջաբան գրուած տողերը,
զորս ներկայացուցի վերև:

ՏԵԹԵ. ՎԱՆՐԱՄ Յ. ԹՈՐՈՍԵԱՆ
(Շարունակելի)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ս. ԵԹԵՐՄԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԷԶ

(ՏԿ. ՎԵՆԵՏԻԿ 1836)

1. Ազգայէլ

Դիցէ, ապէ, Ահարոն ի վերայ երկուց
նոխազաց վիճակս երկուս. վիճակ մի
յանուն տեառն և վիճակ մի ազգայէլի
յանապատս.. Որպէս նոխազն զի արածի
զերանութիւն երկրի և զառնայ. այլ ոչ
եթէ զօրութիւն ինչ այլ է ազգայէլ, այլ
որպէս անապատն կաղէս... Սոյնպէս և
ազգայէլն, զի յիշեացեն զաստուծութիւնն
նորա և զբարկութիւնն նորա՝ որ եղև ի

վերայ նոցա յանապատի անդ. և արգելցին
նոցա ի մեղաց, զի ազգայէլը՝ սաստկու-
թիւն Աստուծոյ անուանի (Եփր. հտ. Ա.
Վ. 222-Յ):

Եփրեմի ակնարկած հատուածը կը գրտ-
նըի Դևտ. ԺԶ. 8, որ մեր Թարգմանու-
թեան մէջ սապէս է. «Եւ արկցէ Ահարոն
ի վերայ երկուց նոխազացն վիճակս. վի-
ճակ մի Տեառն և վիճակ մի արձակելոյ»:
Ազգայէլին համապատասխանն է արձա-
կելոյ. Երբայական բնագրին մէջ ասոր
դէմ կը գտնենք յ[օ]ն 'azāzēl, որուն
իմաստը անծանօթ է. հաւանարար կը
նշանակէ անապատներու մէջ բնակող չար
ոգի մը (տե՛ս Gesenius, Բառ. Իւր 1910,
էջ 570): Եթեանասունը հասկցած են
ազատ արձակուած նոխազ, ինչպէս կը
դնեն նաև յաջորդ 10 և 26 համարներուն
մէջ: Ասորական Թարգմանութիւնը կ'երե-
ւայ թէ լաւագոյն համարեր է պահել
երբայցի՛ բարը, որմէ տառադարձուած է
նաև հայը: Եփրեմի վերի հատուածին մէջ
յիշուած չորս ձևերէն առաջինը ձեռագրին
մէջ գրուած է ազազի, զոր հրատարա-
կիչները միանշանակ համաձայն դարձուցե-
ր են ազգայէլ, մենք պահեցինք ձեռագրին
ձևը՝ քանի որ երբայականին ճիշդ համա-
պատասխանն է:

2. Անառակագնաց

Լահցո՛, Տէ՛ր, զերբան իմ բամբասելոյ...
զոտս իմ անառակ գնացից (հտ. Դ. էջ
240): Ասոր դէմ Գիրք աղօթից ասացեալ
Ս. Եփրեմի Խուրին ասորւոյ, Երուսաղէմ
1870, էջ 69 կը դնէ «Եւ զոտս ի յան-
առակ գնացս երթալոյ», որ անշուշտ լա-
ւագոյն ընթերցումն է, որովհետև այս-
պէս գեղեցիկ կը յարմարի միւս նախա-
դասութեանց կազմին, ուր իւրաքանչիւրը
բացառական հղով աներևոյթով մը կը
վերջաւորի. «Լահցո՛, Տէ՛ր, զերբան իմ ի
բամբասելոյ և զլեզու իմ ի չար խօսելոյ,
զայս իմ յարատ հայելոյ և զականջս իմ
ի չարալուր լսելոյ, զձեռս իմ (ի) յափըշ-
տակելոյ և զոտս իմ ի յանառակ գնացս

բայէն՝ կրնայ աւելի յարմար ըլլալ, բայց դարձեալ բաւարար չէ: Անհրաժեշտ էր ունենալ բնագիրը:

10. Խոստուց

Կենդանի է բանն Աստուծոյ և առաւել հաստու է քան զամեն սուր երկայայրի՝ հատանել անցանել հասանել մինչև յորոշումն ոգւոց և մարմնոց, մինչև յօդս և ի խոստուցս (հտ. Բ. էջ 317):

Հաստուածս առնուած է Պօղոսի Եբրայեացւոց թղթէն (Գ. 12), որ մեր Սակեղարեան թարգմանութեան մէջ հետեւեալ ձևով է. «... և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ և ոգւոյ և յօդից և ողորջ» ասկէ կ'երեւայ որ խոստուց բառին հոմանիշն է ողորջ. բայց ասիկա ոչ թէ զխոս ուղորջն է, այլ ոսկորներուն ծովը, ինչպէս կը ցուցնէ յոյն ընագիրը (μοελὼν) և ինչպէս կը պահանջէ նաև քովի յօդից բառը:

ՆՀԲ անշուշտ մտադիր չըլլալով Եփրեմի վկայութեան բուն աղբիւրին և հետեցնելով յօդ բառին յարադրութենէն՝ խոստուց կը մեկնէ «յօդուած, մարմնին ներքին խաղերը»: Նման բառ էր իրօց կայ հայերէնի մէջ, բայց ունի խոստուց ձևը. ահա ասոր վկայութիւնը. Հասր ձեր եղիցին ի պատարագաց՝ կաշի և աշոյ երի անդամ և ճրագու և զմակ և օրտ և լերդարոյթ և երկամունք և ճարպով ի կողիցն և ի խոստուցս մասն, լեզուն և աշոյ ակն և ամենայն խորհրդական մասունքն (կա. նոն. էջ 54. այս վկայութիւնը չունի ՆՀԲ): Յիշելի է նաև Սարկ. լուս. 22 «Ուղեքան խոստուցս՝ մամուլը, ծնկացն՝ յօշումն, կողիցն՝ քերանք, արտաստացն ամանոց՝ բախմունք»: Ասկէ զատ բառը կենդանի է նաև Երեանի և Ղազարի գաւառականերուն մէջ՝ խոստուց «շանակով կտրած ձկան մասն, կտոր», որմէ խոստուցն է ձուկը մաս մաս կտրել» (տես և իմ յօդուածս խոստուց բառի մասին, Արտ. 1915, 223-4):

Եթէ խոստուց և խոստուց միեւնոյն բառերն են, այն ժամանակ խոստուց բառին զոնէ իբրեւ երկրորդ նշանակութիւն պէտք է

դնել «ուղիղ, ծով», ինչպէս կը հետեւի վերի օրինակէն. մանաւանդ որ Եփրեմի նոյն հատուածին ակնարկութեամբ ուրիշ տեղ մը դարձեալ կը գտնենք ողորջ. ընդ մէջ անցուցանել զազդողական սուրն, որ հատանէ անցուցանէ մինչև յորոշումն շնչոյ և մարմնոյ (') յօդից և ուղղոց (հտ. Գ. էջ 185):

11. Ճապոնել

Ճողողարեան յունչից քոց և սուր ի ձեռս նոցա (հտ. Բ. էջ 174). հոս ձողողարեան կը նշանակէ «խլիկ, կորզել, փրցնել»: Ձեռագրիւններէն մէկը ունի ձողարեան և ձողարեան, ուր ձողարեան անշուշտ ձողողարեան բառին հոմանիշն է: Ասիկա պէտք է զննել ձապոնս «մագիլ, ճիրան» բառէն, որով և բայը կարգաւ ձապոնի «ճանկել, յափշտակել, խլիկ, փրցնել». կենդանի է գաւառականներուն մէջ ձապոնել. ձապոն ձևով և «ճանկել, ճանկաւորել, պոկել փրցնել» նշանակութեամբ:

12. Մանկապէս

Ձի մի՛ ոք ասիցէ մանկապէս զաստուածութիւնն (հտ. Գ. էջ 98). կը նշ. «մանկանման, երեխայի նման»:

13. Մեծահանգոյց

Դարձեալ խրատեաց զնա Աքիտոփէլ վարել ընդ իւր գունդ մի զօրու և անկանել ի վերայ գնդին Դաւթի, իսկ Հորէ իբրեւ ետես թէ Դաւիթ անց գնաց ի Գաղուէս, քանզի հանդերձ կանամբք և որդւովք զնաց նա, և վասն զի զիտաց՝ զի եթէ հալածեն մեծահանգոյց և վատեալ զունդն զկնի փախստէիցն, ժամանեն և կոտորեն զնոսա (հտ. Ա. էջ 401):

Մեծահանգոյց բառը ՆՀԲ կը մեկնէ «յերկար հանգուցեալ, անխնջ, փրատփրատ»: Ըստ իս սխալ է այս մեկնութիւնը. Գաւնի որ փախստականներուն ետեւէն հասնելու վրայ է խնդիրը, աւելի յարմար է մե-

ծահանգոյց հասկնալ «արագ գնացըով»։
 Ինչպէս յայտնի է, հին ժամանակ և դեռ
 հիմայ ալ Արեւելի մէջ, ճամբորդութիւնը
 կ'ըլլար իջկանէ իջկան։ Սովորաբար օրա-
 կան երկու իջկան կ'անցնին։ Մինչև կէս
 օր մէկ իջկան, ուր ճաշել հանգստանալէ
 յետոյ կ'երթան յաջորդ իջկանը, ուր և
 կը գիշերեն։ Այս իջկանները կամ կայա-
 րանները հին լեզուով կը կոչուէին հանգոյց-
 համա։ Խոր. Բ. 43։ Երբ ճամբորդութիւնը
 շատ ստիպողական է, կարելի է փոխանակ
 երկուրէի, երեք իջկան անցնիլ, կամ որ
 նոյն է՝ մէկ օրուան մէջ աւելի մեծ հան-
 գոյցներ կարել։ Ահա ինչ որ Եփրեմի
 Թարգմանիչը կը կոչէ մեծահանգոյց։

14. Յարակիլ

Այլ յիմարութենէ և յանխրատ հակառա-
 կութենէ՝ յորում տգէտը յարակիլ են,
 հրաժարեալ (հտ. Գ. էջ 253)։

Հատուած առնուած է Բ. Տիմ. Բ. 23
 համարէն։ Այլ ի յիմար և յանխրատ
 խնդրոց հրաժարեալ։ Հոս զժրախտաբար
 չկայ յարակիլ, որ հայ մատենագրութեան
 մէջ ուրիշ տեղ մ'ալ գործածուած չէ,
 որչափ գիտեմ ՆՉԲ կը համարէ «թե-
 բևս գրելի յարակցիլ, վարակիլ ևն և
 կամ իմանալի յարանալ, հանապազորդիլ»։
 Իսկ Առձեռնը կը մեկնէ «միշտ շարունակ
 ընել»։ Անստոյգ բառ է, որուն համար
 քնազրի համեմատութիւնը անհրաժեշտ է։

15. Շարակարտող

Դիւթ վասն օգնութեան շարակարտող
 բանիւք պատրէ։ Զաղդէ առ սովի զճնունդս
 նուրիք բախտից և բազում ինչս առնու-
 յանմտից (հտ. Դ. էջ 115)։

Շարակարտող ձև մը գոյութիւն չունի.
 կ'ուղղեմ շաղկրատող «փուն խօսող, յի-
 մարաբանող»։

դիւրաւ որսալիք լինին սատանայի (հտ.
 Դ. էջ 224), նշ. «որսացուող, որսալու
 յարմար»։

Հ. ԱՅՈՒՅՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

Վ Ե Ն Ծ Տ Պ Կ

* *

Այլքերէն ծնած գոհմբ մարգարիտ...

— Երազանք օթեան.

Ծովհարսեբու գրիւն վերայ իբրև Թագ,
 Դուն ծովերուն լուսնեկայ։

Ծովաբնակ յաւերժանքս լուսագեղ...

— Անէացման ծոց խորունկ.

Ջուրէն վեր, լուրթ երկնի հետ համբուրած,
 Բիւր ալիքներ քու քրդանքներդ կը յուզեն,
 Ոսկի աստղեր մագբուրդ մէջ կը շողան։

Վերջալոյս...

Խուլ զանգակներ, կարօտի պէս հեռուէն,
 Ահաւասիկ մեղմիւ, ուժեղ կը հնչեն.
 Լոյսի ստուերի այս քնչ հարսնիք խօլական՝
 Ղօղանջներով ներգաշնակ։

Ո՛հ, կ'ուզէ՛ք կ'ուզէ՛ք

Թրթռացումներն ըլլալ այդ նուրբ զանկերու,
 Հոգեվարքի այդ զօղանջներն ետ ըլլալ,
 Աղօթքի պէս խորերն իջնել սիրտերու
 Սիրոյ, ցաւի, արցունքի։

Վերջալոյս...

Կոնտոլ մ'ահա կը ճողփէ յոյլ նազանքով,
 Սև հարսի պէս արծաթ ծովուն վերայէն։
 Մոռացութեան, անէութեան ինչ վայրկեան
 Կեանքի, վրշտի ու ցաւի։
 Սև կոնտոլներ կապոյտին մէջ անհաստատ
 Գեթեզմաններ անհունին մէջ անծանօթ։

Ո՛հ, կ'ուզէ՛ք կ'ուզէ՛ք

Այդ գերեզմանն ետ ըլլալ,
 Այդ սև կոնտոլն երբուն

Մեղցին մէջ լուսարձակ հեղք մը թողած՝
 Անմահութեան հանճարի...

16. Որսալի

Այսպիսիքն ոչ կարեն վերանալ ի վեր,

ՍԵՔԱ

ՈՒՅՆ

ՕՒՅՆ